

Չ. 3. ՊԵՏՐՈՍԱՆ, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմբեր), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, 183 էջ:

Հայաստանի առաջին Հանրապետությունն առաջացել է ձևավորվել է տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական - միջազգային շահերի բախման կիզակետում և այս առումով համաշխարհային դարակազմիկ նշանակություն ունեցող իրադարձությունների արդյունք է: Անկախության և պետության վերականգնման գաղափարը հայ ազգային-քաղաքական ներուժը փայփայել է դարեր ի վեր, կրել է վերջինիս հարատևության ու շարունակականության ելակետային ուղղվածությունը: Այդ առաջնահերթ ազգային խնդիրն իրականացնելու ճանապարհին ձևավորվել և ժամանակի թելադրանքով հաճախ վերանայվել է հայկական քաղաքական կողմնորոշումը:

Պատմաբան-միջազգայնագետ Գեղամ Պետրոսյանի վերջերս հրատարակված աշխատությունը մվիրված է հայ ժողովրդի պատմության բախտորոշ և հակասություններով լի 1918 թվականին և Հայաստանի առաջին հանրապետության միջպետական, քաղաքական փոխհարաբերությունների ձևավորման մասնական փուլին: Աշխատության հարցադրման առանձնահատկությունն այն է, որ հեղինակը տարանջատել է իշխանություն և քաղաքական կողմնորոշում հասկացությունները: Ավանդաբար շարունակելով ռուսական քաղաքական կողմնորոշման գիծը՝ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը կանգնել էր նոր անակնկալ իրականության առջև՝ ընտրել ռուսաստանյան իշխանություններից մեկի, այլ ոչ պետության քաղաքական կողմնորոշումը:

Հանրապետության գոյության ընթացքում թեև տարվում էր համեմատաբար թույլ արտահայտված ռուսամետ կողմնորոշման գիծը, այնուամենայնիվ մինչև 1920 թ. գարունը գերիշխում էր ռուսական ոչ խորհրդային կազմավորումների հետ կապերի ամրապնդման միտումը: 1918 թ. իրա-

կանությունը այդ էր թելադրում, քանի որ հայ ժողովրդի ազատագրական շարժումների և Հայկական հարցի լուծման տրամաբանությունը պարզապես պահանջում էր լինել այն Ռուսաստանի հետ, որը գրավել-ազատագրել էր Արևմտյան Հայաստանը, չէր հրաժարվում դաշնակիցների հետ ավարտին հասցնել հաղթական պատերազմը և, վերջապես, չէր հրաժարվում գրաված տարածքներից:

Թեմայի գիտական և քաղաքական հրատապությունը հիմնավորվում և կարևորվում է հենց հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում, որտեղ այդ շահերն առավել քան երբեք համընկնում էին:

1917 թ.՝ ռուսաստանյան երկու հեղափոխությունից հետո, արևելահայությունն ու կովկասում ապաստան գտած արևմտահայության բեկորները որոշ առումով վերադարձան մինչթուրքմենչայի փուլը, երբ Անդրկովկասում ու հատկապես Արևմտյան Հայաստանում հայկական տարրը հանդես եկավ առանց Ռուսաստանի: Այժմ իրադրությունն ավելի բարդ ու հակասական էր, քանի որ հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի ազգային-դեմոկրատական կուսակցությունները և նրանց հետ Հայ հեղափոխական դաշնակցությունը հակաբոլշևիզմի աճող ալիքի վրա, չճանաչելով խորհրդային իշխանությունը, օրինաչափորեն և հետևողականորեն հեռանում էին Ռուսաստանից: Ի տարբերություն Անդրկովկասի մյուս ազգերի, հայ ժողովուրդը և նրա ազգային նորաստեղծ կառույցները՝ Ազգային խորհրդներ, Ազգային կորպուս և այլն, առանձնանում են ստեղծված քաղաքական իրավիճակի մկատմամբ վերաբերմունքի հարցում, այն է՝ առայժմ պահպանել Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունները, մյուս կողմից՝ գտնվելով բոլշևիկյան հեղաշրջման մտտալուտ վախճանի տարածված մտայ-

նության ազդեցութեան տակ՝ չճանաչել խորհրդային իշխանությունը: Մի կողմ թողնելով Անդրկովկասում իշխանութեան այլընտրանքի գործոնը, խորհրդայնացման ճանապարհով հայկական ազգային հիմնահարցերի լուծման հնարավորությունը՝ մտան իրավիճակում հայ գործիչների առաջնահերթ խնդիրը դառնում էր ինքնուրույն, միայնակ և թշնամական շրջապատման մեջ գտնել ազգանպաստ ելքը, ձեռք բերել նվազագույն հնարավորը:

Դա էր գլխավոր պատճառը, որ անդրկովկասյան կառավարությունների հայ գործիչները, Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը մինչ անկախացումը և դրանից հետո հարկադրաբար որդեգրեցին միաժամանակ մի քանի քաղաքական կողմնորոշումներ:

Այդ հիմքի վրա ձևավորվեցին նաև Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ Հայաստանի հանրապետության փոխառնչությունները: Այս ուշագրավ և բացառիկ պատմաքաղաքական հիմնահարցն է լուսաբանել Գ. Պետրոսյանը: Դա հայ պատմագիտության սպիտակ էջերից է:

Հեղինակը համակողմանիորեն քննել է Հայաստանի անկախության հռչակման, հանրապետության ներքին և արտաքին կացության խնդիրները, որոնք ի վերջո հանգեցրին հայ պետական, դիվանագիտական գործիչների և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների և դրանց ղեկավարների՝ Ալեքսեևի, Դեմիկիմի և այլոց համագործակցությանը: Գ. Պետրոսյանին մտահոգում են նաև Հայաստանի Հանրապետության ձևավորման, ընդհանրապես անկախություն հասկացության ըմբռնումը և դրա հետ հյուսվող տարակարծությունները: Ժամանակին թևածուժ էր նաև այնպիսի կարծիք, թե «արդյոք հենց Հայաստանի Հանրապետության գոյությունն ինքնին մի կատաստրոֆ չէ»: Այդպիսին էր, օրինակ, ՀԺԿ ղեկավարներից Ս. Մամիկոնյանի կարծիքը, որը միաժամանակ, այդ քաղաքական վերաբերմունքով շարունակում էր ՀՅԴ-ի դեմ ձևավորվող ընդդիմության քաղաքական գիծը:

Անկախության նկատմամբ տարբեր մոտեցումների պատճառներից է նաև արևելահայերի և արևմտահայերի վերա-

բերմունքի տարբերության գործոնը: Ռուսահայերը չէին կարող հրաժարվել Ռուսաստանից, վերջինիս տնտեսական, քաղաքական ու ռազմավարական հովանոց, վերջին հաշվով՝ ապահովությունից: Արևմտահայերը, կոցնցելով հայրենիքը և գաղթելով Արևելյան Հայաստան, օրյեկտիվորեն հանդես էին բերում հիմնավորված անհանդուրժողականություն, շտապողականություն, հանրապետությունը կոչում էին տակ «Արարատյան»՝ Հայաստանը համարելով Արևմտյան Հայաստանի տարածքը, ուստի և գործիչների մեծ մասը հակված էր արևմտյան կողմնորոշմանը, որի վերջնական նպատակը միացյալ Հայաստան տեսնելու գաղափարն էր: Միանգամայն իրավացի է հեղինակը՝ նշելով. «Պատահական չէր, որ ՀՀ-ի գոյության առաջին շրջանում Հայաստանի խորհուրդը և կառավարությունը նպատակահարմար չհամարեցին պաշտոնապես հայտարարություն անել երկրի անկախության հռչակման մասին»: Ավելացնենք միայն, որ մտան քայլի չգնալու դրսևապատճառներից էր նաև այն լքվածության, անօգնականության մթնոլորտը, որը համակել էր հանրապետության ղեկավարությանը: 1917 թ. նոյեմբերին հայ ազգային-դեմոկրատական գործիչները գնացին փոխգիշման վրացական մեմբերի մի և ադրբեջանական մուսավաթականների հետ, միավորվեցին խորհրդային իշխանությունը չճանաչող կառավարության մեջ, անգամ փորձեցին Թուրքիայի հետ մերձեցման ճանապարհով դուրս գալ քաղաքական մեկուսացումից: 1918 թ. մայիս-հունիսին, երբ հայությունն էր միայնակ դիմագրավում դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքին, դաշնակից հարևանները լքում էին ու բացահայտ դավաճանում: Ի դեպ՝ դա սպասված քաղաքականություն էր: Դաշնակցությունը բազմիցս էր բախվել սառն հանդարտությունից ու թշնամանքի, ստաց հայտնվելով այսպես կոչված «համադեմոկրատական», հակաբոլշևիկյան կովկասյան խմբավորման մեջ՝ հանդես էր գալիս խորհրդային Ռուսաստանի դեմ:

Պետք է շեշտել նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանը, թեև ցնցվում էր քաղաքական վայրիվերումներից, բայց, միևնույն է, չէր հրաժարվում Անդրկովկասից:

Դա բխում էր ռուսական պետության արտաքին քաղաքականության տրամա-

բանությունն, անկախ «կարմիրներ-սպիտակներ» հակամարտությունն;

Այլ բան է, որ իշխանության ձևը կարող էր շտկումներ մտցնել ուսական պետության տարածքային նվաճումների հարցում: Իրականում բոլշևիկները, հետագայով Ռուսաստանի ազգային-պետական շահերից և կնքելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, միայն ժամանակ էին շահում՝ առաջնահերթ համարելով իշխանության պահպանման խնդիրը: Հետագա իրադարձությունները վկայում են, որ Ռուսաստանը, բացի Արևմտյան Հայաստանից, վերադարձրեց բոլոր կորցրած կայսերական տարածքները:

Ոչ միայն չհասնելով սպասվածին, այլև հակառակը՝ կորցնելով Արևմտյան Հայաստանը, իսկ Բաթումի պայմանագրից հետո հայտնվելով կործանման եզրին, թուրքերի դեմ հանդիման, Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ստիպված կրկին հայացքը հառեց դեպի Ռուսաստան՝ սկզբում հույսը կապելով ոչ խորհրդային կազմավորումների, սպիտակ շարժման հետ, իսկ 1920 թ.-ից բանակցելով խորհրդային իշխանության հետ: Այս համատեքստում Գ. Պետրոսյանը իրավացիորեն մշտն է, որ «Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերությունները կրում էին գաղտնի և կիսապաշտոնական բնույթ, Հայաստանում պահպանվում էին Բաթումի պայմանագրի պահանջները»: Եթե բացենք փակագծերը, ապա ստացվում է, որ Դենիկիցի և այլոց հետ կապը, ձևավորվող մտերմությունը ինքնին ուղղվում էր խորհրդային իշխանության դեմ, ինչը աննկատ չէր կարող անցնել: Այլ բան է իրական համագործակցությունը, փոխադարձ շահերի ընդգծումը, բոլորովին այլ բան դեկլարատիվ հայտարարությունները; Այս առումով կարելի է քննարկել Գ. Պետրոսյանի մեջբերումը Ռ. Դարբինյանից, թե «...հայ քաղաքական վերնախավի, հասարակական լայն շրջանակների միջավայրում գերակայում էր Ռուսաստանի հետ բարեկամական, բնականոն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մտայնությունը՝ անկախ նրա պետական քաղաքական կառուցվածքից» (էջ 26): Ռուսաստանի հանդեպ վերաբերմունքը այս փուլում լավագույնս դրսևորվել է Հ. Քաջագունու երկա-

կի կարծիքում: Նրան են պատկանում և այս՝ «Ռուսաստանի հետանալը Անդրկովկասից դժբախտություն է և մյուս՝ «Մեր ընթացիկ քաղաքականությունը չի կարող կառուցվել ուսական կողմնորոշման վրա. Ռուսաստանի հետ դիվանագիտական կապերը կարող են կործանարար լինել» իրարամերձ տեսակետները: Այո՛, 1918 թ. ամռանը ակտիվորեն քննարկվում էր Ռուսաստանի հետ մերձենալու հնարավորությունը, այդպիսի առաջարկներով հանդես էին գալիս հայ քաղաքական դաշտի երբեմն հակադիր քննադատները՝ կանգնած ուժերը, ինչպես օրինակ՝ Հայ ժողովրդական կուսակցությունը, ուսկավարները, հայ մեծշևիկները, էսեռները, բոլշևիկները: Ուստի այս հարցի լուսաբանումը երևի թե պետք է ձերբազատվի կուսակցական նյութի ազդեցությունից: Գ. Պետրոսյանը շահեկանորեն խուսափել է այդ բարդ խնդրում կուսակցության շեշտադրումներից և ցուցաբերել է գիտական անաչառություն, համազգային շահի բարձր գիտակցում: Հիմնավորված են նաև նոր պայմաններում Ռուսաստանի հետ կապերի վերականգնման նրա թվարկած նախադրյալները՝ ա) միջազգային մեկուսացվածություն, բ) տրնտեսական քայքայված վիճակ, գ) գաղթականության խնդիր և այլն:

Հիշարժան է նաև հեղինակի վերաբերմունքը Վրաստանի հակահայկական և հակառուսական դիրքը բացահայտելու հարցին: Բաթումի պայմանագրի կնքումից հետո Վրաստանը ապառնում էր Հայաստանին և պահանջում վերջ տալ ուսական քաղաքական կողմնորոշմանը: Դա ինքնին մշանակում էր հրաժարվել Արևմտյան Հայաստանից, որդեգրել գերմանա-թուրքական կողմնորոշում և նրանց միջոցով ընդունել Անդրկովկասում վրացական գերիշխանությունը:

Այս հարցում վրացական Ս.-Ռ. մեծշևիկները հետևողական էին, նրանք, անթաքույց ոտնահարելով ազգերի իրավահավասարության և ազատ ինքնորոշման սկզբունքը, հանդես գալով հարևանի հաշվին սեփական շահի գերակայության սկզբունքով, վերածվում էին նվաճող-ագրեսորի: Դեռ 1917 թ. գարնանը, երբ փետրվարյան հեղափոխության պայմաններում, որպես Հայկական հարցի լուծման տարբերակ, առաջ էր քաշվում Արևմտյան Հայաս-

տանում քաղաքացիական իշխանության ստեղծման հարցը, Նոյ ժողովան արդեն բացահայտում էր վրացական գործիչների դիրքը՝ Աշխուբ, որ «մինչև 1918 թ. օգոստոսին հետևում էր Թուրքիային»: Այս առումով միգրացիոն կարիք կար անդրադառնալ նաև սիոնիզմի գործունեին՝ որպես տվյալ փուլում ազգամիջյան և միջպետական հարաբերությունների իրականացման միջոցի: 21-րդ 1918 թ. օգոստոսին հետևում է Օհանջանյանի և Իոֆֆեի վեճը այդ քաղաքականության բացահայտ դրսևորումներից է: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրողներից մեկը՝ Իոֆֆեն, չէր հանդուրժում հայկական անկախ պետության ստեղծման փաստը, ինչը այս ժամանակաշրջանի ելակետային սկզբունքն էր: Ընդհանուր է, կամավորական բանակը և չէր ընդունում ռուսական նախկին կայսրության կողմից անջատված անկախ պետությունների գոյությունը և պահանջում էր «Մեկ, մեծ և անբաժան Ռուսաստան»:

Դեմոկրատիան միաժամանակ հստակ տարբերակում էր մտցնում Անդրկովկասի անկախ հանրապետությունների գլխատմամբ վերաբերմունքի հարցում. Վրաստանը դիտվում էր որպես բացահայտ հակառուսական գործոն, իսկ Ադրբեջանը չէր ընկալվում անգամ որպես ինքնուրույն ազգային-էթնիկական, առավել ևս պետական միավոր:

Հիմնավոր են նաև Գ. Պետրոսյանի եզրակացությունները, որոնք բացահայտում են կամավորական բանակի հետ կապերի հաստատման դժվարությունները: Դրանք են՝ 1. Վրաստանի դիրքը և Հայաստանի շրջափակումը, 2. Անդրկովկասյան իշխանությունների թշնամական վերաբերմունքը խորհրդային իշխանության գլխատմամբ, որը 1917-1918 թթ. արտահայտվեց ռուսական կովկասյան բանակի նահանջի ընթացքում, և այդ նույն բանակի հետ մերձեցնող, կապող հանգամանքները՝ այն, որ

1. հայկական բանակը դիտվում էր Անդրկովկասում կամավորական բանակի միակ պահեստի ուժը և 2. որպես հակավրացական և հակաթուրքական գլխավոր պատվար:

Գլխավոր հակասությունը այն է, որ համագործակցել Դեմոկրատիայի հետ Աշխուբում էր հեռանալ խորհրդային Ռուսաստանից:

Գ. Պետրոսյանի մեծագրությունը մեծապես շահում է ինչպես համապատասխան փաստաթղթերի հավելվածի գեներալից, ինչը լրացնում է հեղինակի հիմնական եզրակացությունները, այնպես և տեքստի ռուսերեն թարգմանության համազանգեցից: Այս գիրքը ընթերցվում է հետաքրքրությամբ, հեղինակի կարծիքներում դրսևորվում են պատմական դարակազմիկ անցումների բովանդակում ձևավորվող հայկական արտաքին քաղաքականության ուղղությունները, որոնք հաճախ պարտադրվում էին արտաքին հզոր աշխարհաքաղաքական զարգացումների և տերությունների կողմից: Հատկապես կարևորվում է հեղինակի կեցվածքը քննարկվող հարցերի վերաբերյալ, որը գիտական և հայրենասեր է: Բարդ հիմնախնդիրներին տրվում են սկզբունքային, բայց և ոչ միանշանակ պատասխաններ, փորձ է արվում գտնել հնարավոր ելքերը, չմեղադրել, չհիմարել «գլխավոր մեղավորին»:

Գեղամ Պետրոսյանի գիրքը նոր խոսք է Հայաստանի առաջին Հանրապետության վարած արտաքին քաղաքականության, ՀՀ քաղաքական կողմնորոշման լուսաբանման ասպարեզում, կարևորվում է հայոց պատմության և Հայաստանի առաջին Հանրապետության միջազգային հարաբերությունների հետազոտման տեսանկյունից:

Վ. Հ. ՄԵԼԻՔԵԱՆ